են գործ դրել և նեղութիւն պատճառել հայերին, փախել դնացել են պարսից երկիրը. նոքա այստեղ չեն գտնուում։ Ժողովուում են կուսակալի մօտ մեծ բազմութիւն, սկսում են աղաղակել գանգատել իրանց կրած հալածանքների և բռնութեան մասին։ Ակնարկում է կուսակալը խան Պօղոս բէգին. լսում ես այդ գանգատները։—Այո, լսում եմ։—Զյայտնեցիր ինձ նրանց անունները, որ ես գատեմ նրանց։—Տէր կուսակալ, այն անձինք՝ որոնց պահանջում էք, խանիցն էլ առաջ փախան դնացին. մնացեալները խաղաղ մարդիկ են։—

Խան Պօղոսը Յովհաննէս Կարբեցի կաթուղիկոսի ժամանակ (1830) Յովսէփ արքեպիսկոպոս Վեհապետեանցի միջնորդութեամբ՝ Ս. Էջմիածնի տաճարի կաթուղիկէն նորոգել է տուել։

Մեծաքանակ ծախսով մի մեծ պալատանման շինութիւն կառուցանելով Զամախի քաղաքում, ընծայել է կառավարութեան, ուր գտնուել են թաղաւորական տեսանները և դատաստանները 1840–41 թուականին։

Պարսկաստանից բաւականաչափ խոյեցի հայեր ընտանիքով գաղթել էին Զամախի, և իրանց համար բնակութեան տեղ են խնդրում. խան Պօղոսի միջնորդութեամբ տալիս են գաղթականներին Զարխու անուանուած տեղին, ուր բնակութիւն են գցում յիշեալ գաղթականները և մնում են մինչև յայսօր։ Խան Պօղոսը տեսնելով նոցա թշուառ վիճակը, իւրաքանչիւր գերդաստանին մի մի թաղար (25 փութ) ցորեան է ընծայում իւր շտեմարանից։ Տալիս է նրանց և սերմացու ցորեան, բաժանում է նրանց առանց տոկոսաց փողեր, որ պատրաստեն իրանց համար վարուցանքի գործիք, գնեն լծկան անասուններ և այլն, միով բանիւ աշխատեն չէն լինել և ժամանակին իրանց պարտք առած փողերը վերադարձնել առանց տոկոսաց։

Խան Պօղոս ապան ունեցել է ութ արու զաւակներ և մի դուստր. ապրել է 107 տարի. փոխանուել է 1847 թ. օգոստոսին՝ Աստուածածնի Վերափոխման տօնին. եղել է առողջակազմ և գուարթադէմ անձն, շատ եկեղեցասէր և հիւրասէր, սիրող և յարգող է եղել հոգեւորականներին և խնամք տանող աղքատ-